





Միջոցառմանը ներկա էին Վրաստանում ՀՀ դեսպանության քարտուղար Արթուր Սարգսյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, թբիլիսահայ մտավորականներ, հասարակայնության ներկայացուցիչներ:

Իր օրհնաբեր ներկայությունն էր բերել Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը:

Գիտամշակութային կենտրոնի ղեկավար Գիսանե Հովսեփյանը ողջունելով ներկաներին, հիշեցրեց Եղիշե Չարենցի այցելությունը Թումանյանի տուն, որտեղ սակայն նրան բախտ չի վիճակվում հանդիպելու Ամենայն հայոց բանաստեղծին:

Ու թեև շուրջ 100 տարի է անցել այդ օրից, այսօր արդեն

սերունդների կողմից հայ գրականության երկու ռահվիրաների շունչն է թևածում այս տանը:

Ու տարածվեց հայ գրականության գահակալ Եղիշե Չարենցի ու նրա անմահ, մարտաշունչ

,  
հրաբորբոք

պոեզիայի  
գոհարների

գովքը

,  
Եղիշե  
Չարենց  
բանաստեղծի

,  
հայրենիքի  
հարատև  
մարտիկի

,  
բոցաշունչ  
հայրենասերի  
ստեղծագործությունների  
անմահ  
պաթոսը:

Վիրակնօրյա դպրոցի օտարալեզու սաները, ում համար Եղիշե Չարենցը մինչև այժմ եղել է անծանոթ անուն, նորերը մի քանի ամսվա, իսկ ավագները մեկ տարվա ընթացքում մայրենի լեզվով սերտեցին ու հնչեցրին անմահ բանաստեղծի պոեզիայից նմուշներ, ներկայացրեցին

բանաստեղծի կյանքի էջերը՝ վերհանեցին իրենց հոգում ձևավորվող

սերն ու գնահատականը հայ գրականության մեծերի գրական ժառանգության նկատմամբ :

Միջոցառումը իմաստավորված, հնչեղ դարձնելուն լիովին օժանդակել էր վաստակաշատ ու սուցչուհու, հայ գրականության համաստեղությունից աստղեր ներկայացնելու նվիրյալի ու ջատագովի

աշխատանքը

, ով իր գեղեցիկ հայերենով, ամսունքով և երգով դարձավ նաև միջոցառման մասնակիցը: Իր գեղեցիկ կատարումով միջոցառումը գեղեցկացրեց թիվ 103 դպրոցի աշակերտ Էդմոնդ Ախոյանը:

Հավարտ միջոցառման իր օրհնությունը ներկաներին հղեց և գնահատանքի խոսք ասաց Վիրահայոց թեմի



Միջոցառման ավարտին մասնակիցների կողմից միահամուռ հնչեց «Ես իմ անուշ Հայաստանի  
նաստեղծությունը, որպես» բա

մայրենիին

ու

մայր

հայրենիքին ուղղված հպարտության գովք: